

ՎՐԱՅԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ XVI-XVIII ԴԴ.
ՀԱՅԵՐԵՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

ՆՈՐԱՅՐ ՊՈՂՈՍՅԱՆ

Դարեր ի վեր հայերենը սերտ շփումների մեջ է եղել հյուսիսային հարևանների՝ կովկասյան (այլ տերմինով՝ իբերո-կովկասյան) լեզվաընտանքին պատկանող լեզուների հետ: Լեզվաբանական գրականության մեջ առանձնացնում են հիմնական երեք խմբեր՝ հարավկովկասյան կամ քարթվելական, արևմտակովկասյան կամ աբխազ-ադրդեյական, արևելակովկասյան կամ նախյան-դաղստանյան¹: Նկատված է, որ հարավկովկասյան լեզվախմբի մեջ մտնող լեզուների հետ հայերենի վաղագույն առնչություններն ունեն նուստրատիկ բնույթ: Այդպիսի բառային զուգադիպություններից են, օրինակ՝ հայերեն *տի* (մեծ) – վրացերեն, ճաներեն, մեգրելերեն *did* (մեծ), հայ. *ցելուլ* (պատռել, ճեղքել), *ցել* (վարած հող) – վրաց. *cel-* (գերանդի), հայ. *սիքս* (հնդեվր. *k'erd) – վրաց. *mkerd*, մեգր. *kidir, kədar* (կուրծք, սիրտ) և այլն, բնաձայնություններից՝ հայերեն *բղեգ, բզզալ* – վրաց. *bzu-*, ճաներեն *buz-al-* (բզզալ), հայ. *ծվալ, ծվծվալ* – ճաներեն, մեգրելերեն *cw-* (ասել) և այլն: Հայերենի ու քարթվելական լեզուների հին ընդհանրությունների մի մասն էլ արդյունք է մի երրորդ լեզվից, հիմնականում՝ իրանական, սեմական լեզուներից կամ հունարենից կատարած ընդհանուր փոխառությունների:

Հայ-քարթվելական կամ հայ-վրացական լեզվական հնագույն առնչությունները հայերենի հնչյունական կամ բառապաշարային շատ իրողություններ մեկնաբանելու լրացուցիչ նյութ են տալիս: Օրինակ՝ ըստ Հ. Հյուբշմանի՝ հայերենի նախաշեշտ վանկում ի>ը, ու>ը, է>ի հնչյունափոխական դրսևորումներն ի հայտ են եկել մինչև մ. թ. ա. 3-րդ դարը, և հայերենից վրացերենին անցած այն բոլոր բառերում, ուր նշված հնչյունափոխությունը չի արձանագրվել, փոխառվել են մինչև այդ դարը՝ հայ. *թթու* – վրաց. *tutu*, հայ. *հրեայ* – վրաց. *(h)uria*: Հնագույն շրջանում հայերենի կատարած փոխառություններն ուսումնասիրելիս Գրիգոր Ղափանցյանը մատնանշում է քարթվելական (իր տերմինով՝ լազո-մեգրելական) և հայկական բառային 20-ից ավելի ընդհանրություններ, ինչպես՝ մեգր. *gordi* – հայ. *գորս*, լազ. *korali* – հայ. *կոսալ*,

¹ Տե՛ս **Գևորգ Զահուկյան**, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 584-604:

մեզր. *ragvi* – հայ. *երազագ*՝ «կենդանիներ բռնելու ցանց»² և այլն:

Հայերեն-վրացերեն առնչությունների երկրորդ շրջանը պետք է համարել երկու լեզուների գրավոր շրջանում կատարված փոխառությունները: Դրանք գրաբարյան և միջինհայերենյան աղբյուրներում գրանցված վրացական փոխառություններն են, ինչպիսիք հանդիպում ենք, օրինակ՝ Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկում, ինչպես՝ **ծիկնօպար**, **ճղօնդիտէլ**, **մամթավար**, **մումբերիզ** և այլն: Դրանք հիմնական գրքային փոխառություններ են և հետագա կիրառությունն մեր լեզվում չեն ստացել: Իսկ վրացերենից հայերենին անցած մի շարք այլ փոխառություններ, ինչպես մեր ցանկից է երևում, հիմնականում առօրյա կյանքին վերաբերող բառեր են, որոնցից շատերը, «վաղուց ի վեր գործածական են եղել ժողովրդախոսակցական լեզվում և տարբեր բարբառներում»³:

Ուշ միջնադարում աստիճանաբար ստվարացած թբիլիսահայ բարբառում ավելի շատ են գործածվել վրացերեն բառեր, սակայն ուշագրավ է, որ տեղի հայերի գրավոր խոսքում հոծ բազմություն չի նկատվում (ի տարբերություն պարսկախոս, թուրքախոս կամ արաբախոս միջավայրերի հայերեն բարբառների): Օրինակ՝ Սայաթ-Նովայի հայերեն տաղերում հաշվվում են վրացերեն 20-ից ոչ շատ բառեր՝ **մաթլարա** (խոր ափսե), **փոթոլ** (տերև), **թավադ** (իշխան) և այլն⁴:

Ի դեպ՝ պետք է ասել, որ ներկայացվող շրջանի հայերենում **վրացի** բառն արտահայտում էր ոչ թե կամ ոչ միայն «վրացի ազգի ներկայացուցիչ», այլև՝ «վրացաբնակ, վրաստանցի», աղբյուրներում **վրացի** են կոչվել հայազգի շատ ներկայացուցիչներ, օրինակ՝ «Վրացի Յովհաննես վարդապետ վկայ եմ»⁵: «Այս Բ բինադարս **վրացի են, ազգաւ հայ**, ի քաղաքէն Թլվիսու»⁶: Ընդ որում՝ բնագրում եղել է **վարացի**, Չ. Ագուլեցու երկը հրատարակողը տպագիր օրինակում այն դարձրել է **վրացի**:

Երկու խոսք՝ միջնադարում վրացական փոխառությունների թվաքանակի և բովանդակային դաշտի մասին: Հրաչյա Աճառյանը նշում է 56 վրացական փոխառություն⁷: Հ. Աճառյանի ուսումնասիրությունից ավելի ուշ հրատարակված «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» բառագիտության բաժանի հեղինակ Մ. Մուրադյանն իր

² **Գրիգոր Ղափանցյան**, Հայոց լեզվի պատմություն. հին շրջան, Եր., 1961, էջ 78-92:

³ **Ռուբեն Ղազարյան**, Միջին հայերենի բառապաշարը, Եր., 2000, էջ 153-157:

⁴ Տե՛ս **Ա. Քոչոյան**, Սայաթ-Նովայի հայերեն խաղերի բառային կազմը, «Պատմաբանասիրական հանդես», 1963, թ. 1, էջ 259-262:

⁵ «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր», պրակ I, կազմեց՝ Հար. Աբրահամյան, Եր., 1941, էջ 83: Այնտուհետ նշված գրքից մեջբերումները կներկայացնենք շարադրանքում՝ Կալվածագր. հապավված ձևով:

⁶ «Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը», Եր., 1938, էջ 72: Շարադրանքում տե՛ս **Չ. Ագուլ.** հապավված ձևով:

⁷ Տե՛ս **Հրաչյա Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, մաս II, Եր., 1951, էջ 222-225:

կազմած ցանկում բերում է ավելի քիչ՝ 39 փոխառություն⁸:

Ուշ միջնադարի հայերեն աղբյուրներից մեր քաղած և ներկայացրած վրացական փոխառությունների թիվը 15 է⁹: Այդ բառերը հիմնականում վկայված չեն լեզվաբանական ուսումնասիրություններում, ինչպես նաև գրաբարի ու միջին հայերենի բառարաններում: Հնարավոր է, իհարկե, որ ներկայացվող բառերից մի քանիսը հայերենին են անցել ոչ թե 17-18-րդ դարերում, այլ դրանից էլ վաղ շրջանում, սակայն մատենագրության մեջ են ներմուծվել և որպես կայացած փոխառություն մեզ ավանդվել հատկապես վաղ աշխարհաբարի շրջանից:

Ստորև ներկայացնում ենք մեր քաղած վրացական փոխառությունները՝ լեզվական որոշ մեկնաբանություններով և բնագրային վկայակոչումով:

* * *

ԲՈՎԱՆԱՅ - վրաց. bogana, bogano «ընչազուրկ, եկվոր»։ «Մեր՝ Սամծերէցիքս, գիր տվինք Սանահնու Բարսեղ եպիսկոպոսին, որ տուն Դ ուր մաշակ (աշխատավոր, մշակ) գնաք, թէ **բոկանայ** կայ, թէ բուհիաթ տուն Ե Կոնայ սար ի վեց չափ քաղցու»¹⁰:

ԳԱՆԱՂՕԲ(Ա) – վրաց. ganaqopi «բաժանուածք, բաժնեմաս, դրացի, հարևան»։ «Ես՝ Շանշի որդի պարոն Գօրգիս, իմ որդի պարոն Պապիս, իմ եղբարքս, **գանաղօբերս** էստատէս, Դարիսպանս, մեր Սամծերու յայգին տվինք վախմ Սանահնու Սուրբ Աստուածածնին» (Յիշ. Սանահն., 150):

ԳԼԵՆԻ – վրաց. **glekhi** «ճորտ գյուղացի», առհասարակ՝ «հպատակ, հարկատու»։ «Ո՛չ էր ինքն ազնիորդի... այլ ի հասարակ եւ ի խոնարհ ազգէ՛ գոր ազգն Վրաց **գլէխի** ասեն» (Դարիժ., 120)¹¹:

ԴԻԴՓԱԼ – վրաց. dedopali «թագավորի մայր», Վրաստանի թագավորների մոր տիտղոսը. «Շահաբաս... զոմն յիշխանաց իւրոց առաքեալ է, զի կամ դարձուցէ **գդիդօփալն** ի քրիստոնէութենէ յօրէնս Մահմետի, եւ կամ չարաչար մահուամբ կորուցէ» (Դարիժ., 143): «Մերձ կացեալ ի դունն **դիդօփալին** կոչեաց զնա, եւ առանց երես-երես տեսանելոյ յետուստ կուսէ դրանն խօսեցաւ ընդ նա» (Դարիժ., 145):

ԸՌԱՏԱՀԱՆ – Պ. Մուրադյանը կասկածանքով բխեցնում է վրաց. ratevani բառից, գրելով՝ «թերևս վրաց պաշտօնեայ կամ անձնանուն»։ «Ես՝ Շատպերի որդի Պապունէս, հրամանաւ Ռօստօմ խանի եկինք Լօ-

⁸ Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, Եր., 1972, էջ 296:

⁹ Վրացերեն բառերի բառարանային իմաստ(ներ)ը ճշտել ենք նախ և առաջ հետևյալ աշխատության միջոցով՝ **Д. И. Чубинов**, Грузино-русский словарь, Тбилиси, 1984:

¹⁰ «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քեթոսկը)», աշխատ. Պարոյր Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 158: Շարադրանքում տե ս Յիշ. Սանահն. հապավված ձևով:

¹¹ **Առաքել Դարիժեցի**, Գիրք պատմութեանց, աշխատ. Լ. Ա. Խանլարյանի, Եր., 1990:

ոյի **ըռսատսահան** Ամիլախօրի ազնի որդի Իւանի» (Յիշ. Սանահն., 150):

ԹԱԻՍՏ - վրաց. tavadi «ֆեոդալական բարձր դասի ներկայացուցիչ». «Կանայք իշխանացն եւ ազնիորդուոցն եւ **թաւատացն**, որք էին մեծագգիք եւ դասերք իշխանաց» (Դարիժ., 121):

ԾԻԼ - վրաց. çili «մաս, բաժին, հասանելիք». «Մեր **ծիլ** Քաչալանց Ընկըզեց փոսի Ա աւրավար հողն» (Յիշ. Սանահն., 141). «Մեր հայրական **ծիլ** Քիստում տունն և իր առաջի կալն հաւասար ծախեցի» (Յիշ. Սանահն., 142): «ԶՍամձերու Գոգիպանց **ծիլ** այգին առանք և վախմ հաստատեցինք» (Յիշ. Սանահն., 113):

ՃԱԼԷ (ճալա) - վրաց. j'ale «կղզեակ, մեկուսի տեղ». «Զուսի ծիլն և զՄորանց ծիլն **ճալէտվն** գնեցինք և զՍամձերու Գոգիպանց ծիլ այգին առանք և վախմ հաստատեցինք» (Յիշ. Սանահն., 113):

ՃԼԼԱՄԱՀ – բառի առաջին բաղադրիչն է **ճլեղք, ճլերք**՝ վրաց. *glerki* «թոքախտ», այստեղ **ճլլամահ**-ն ունի «կիսամեռ» իմաստը (ստուգաբանությունը՝ Մ. Բրոսսեի). «Երեքին աբեղայքն՝ որք այնքան տանջեցան ... **ճլլամահ** կենօք կային եւ ըղձային մահու» (Դարիժ., 387):

ՄՈՎՐՈՎ/ՄՈՒՐԱԻ - վրաց. mourovi բառից՝ միջնադարյան Վրաստանում «քաղաքի կամ գյուղի, նահանգի կառավարիչ». «Այլ այրս այս **մուվրով**՝ ոչ էր ինքն ազնիորդի... այլ ի հասարակ եւ ի խոնարհ ազգե» (Դարիժ., 120): «Եղբայր աղջկանն **մուվրով**՝ յոյժ ուրախացեալ ընդ գործն այն՝ եւ գոհանայր զԼաւասափէն» (Դարիժ., 121): «Գիրս մեր **մուրաւ** Բայդուրի ձեռովն տվիք» (Յիշ. Սանահն., 158):

ՆԱԹԻԱՍԻ - վրաց. nat'esav-i «ազգական, տոհմակից, մերձաւոր». «Իսկ որ իմ **նաթիասու** մնայ, յետ իմոց չունի հրաման, որ զայս ինչ վախմս կտրէ Աստուածածնի դոնէն» (Յիշ. Սանահն., 225):

ՆԱԶԱԽ - վրաց. najakh «կացնի ձևով հին սառը գենք՝ սակր, տապար, կացնիկ». «Էառ ի ձեռաց փայեկին զկացնակն, որ է **նաջախն**, եւ նովաւ ուժգին բախմամբ եհար զգլուխ երիցոյն եւ կարի պատառեաց» (Դարիժ., 159): Նկատելի է, որ այս դեպքում Առաքել Դավրիժեցին իր գործածած հայերեն տերմինը թարգմանում և բացատրում է վրացերեն համարժեք բառով՝ ընթերցողին հասկանալի դարձնելու համար:

ՆԱՅՎԱԼ - վրաց. nacvali «փոխանորդ, տեղապահ». «Ես՝ Մարգիս եպիսկոպոս գրեցի, այս բանիս վկայ եմ, Աստուած վկայ է, պարոն Մարիամ Դեղրփալի **նացվալն** ափխագս վկայ. Ավթանդիլի **նացվալ** Կիպրիէն վկայ» (Յիշ. Սանահն., 226):

ՋԻԼՏՈՒ - պարսկ.-վրաց. jaldu, jildo «պարզ, շնորհ» (ծանոթ. աշխատասիրողի). «Յորժամ լուաւ Շահ Ապագն, զղագախն քչեց տարաւ դարագիրտ և Արդուրեցոնց Ժ գեղ **ջիլտու** էրետ» (Յիշ. Սանահն., 64):

ՄԻԱԼԹԻՈՒՅԵՄ - բառը գետեղված է Սանահնի վանքին վերաբերող 1652 թ. մի փաստաթղթի կնիքի վրա՝ «**Մալթիուցես** Վախտանգ» ձևով (Յիշ. Սանահն., 71): Հրատարակիչ Պ. Մուրադյանը բխեցնում է

վրաց. saxl̄uxucesi «պալատական կառավարիչ, պալատական գործոց կարգավորող» բառից:

Անշուշտ մեր բերած փոխառություններով չեն սահմանափակվում XVI-XVIII դարերում հայերեն-վրացերեն լեզվական շփումները, բազմաթիվ այլ աղբյուրներից, հնարավոր է, ի հայտ կարող են գալ հայերեն գրավոր խոսքի մեջ մտած վրացերեն նոր բառեր ևս: Եվ դրանք բոլորը մատնանշում են լայն իմաստով հայ-վրացական սերտ առնչությունները նշված դարերում:

Բանալի բառեր – *փոխառություն, վրացերեն, լեզվաընտանիք, վաղ աշխարհաբար, լեզվական առնչություններ, թրիլիսահայ բարբառ*

НОРАЙР ПОГОСЯН – *Грузинские заимствования в армянских источниках XVI–XVIII вв.* – На протяжении веков армянский язык находился в непосредственном контакте со своими соседями, в частности с грузинским, относящимся к кавказской языковой семье. В двух языках отмечен целый ряд совпадений, например, армянское տի (большой) и грузинское did, армянское սիրտ (сердце) и грузинское mkerd. Лингвисты зафиксировали в армянском языке около 50 слов, заимствованных из грузинского в средние века. Главным образом они относятся к ремесленной и административной сферам и демонстрируют деловые и политические связи двух народов.

Ключевые слова – *заимствования, языковая семья, ранний ашхарабар, языковые связи, тбилисский диалект армянского языка*

NORAYR POGHOSYAN – *Georgian Borrowings in XVI-XVIII cc. Armenian Sources.* – Throughout centuries the Armenian language has been in direct contact with its southern neighbours, especially with Georgian, pertaining to the caucasian language family. There are a large number of linguistic coincidences between these 2 languages, for example, Armenian “ti”, meaning big, and Georgian “did”, Armenian “sirt” (heart) and Georgian “mkerd”.

A number of linguists outline about 50 words that have been passed to Armenian vocabulary from Georgian during the middle ages. These loan-words are mainly concerning craftsmanship, mechanical and administrative sphere.

Georgian words have also been found in the Armenian scripts of the 16th to the 18th centuries, e.g. glekhi (slave), nadjakh(axe), tsil (part, fraction) and so on. As a result of this language intercourse the Armenian language enriched and these borrowed linguistic examples denote cultural and political relations between two nations.

Key words – *borrowing, Georgian language, language family, Early Ashkharabar, language relations, dialect of the Armenians of Tbilisi*